Կարգապահական գործ թիվ ԿԳ-23026

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Արաքս Վարդանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Հայկ Սահակյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Արտավազդ Փարսադանյանի և Լիանա Մխիթարյանի,

քննության առնելով փաստաբան Արտավազդ Փարսադանյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան)** (արտոնագիր՝ թիվ 226), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Լիանա Մխիթարյանը **(այսուհետ՝ նաև Դիմող),** դիմելով Պալատ, հայտնել է, որ կարգապահական նիստի ընթացքում թե դահլիճում, թե միջանցքում փաստաբան Արտավազդ Փարսադանյանն իր հասցեին հնչեցրել է վիրավորական արտահայտություններ:

Նիստերի դահլիճում կարգապահական հանձնաժողովի անդամների ներկայությամբ Փաստաբանը կատարել է «Քեզ կարգի հրավիրի այ ոչխար» արտահայտությունը: Իսկ միջանցքում, աշխատակիցների ներկայությամբ, վիրավորել է «Ես քո հետ հետո կխոսեմ այ խփնված, դու շուտով կանացի գաղութում ես գտնվելու, տես քո գլխին ինչ եմ դնելու» բառերով:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 15.08.2023 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 25.08.2023թ. ներկայացված բացատրությամբ ըստ էության պնդել է նախկինում ներկայացված իր դիրքորոշումը՝ հավելելով, որ Դիմողի հասցեին վիրավորական արտահայտությունները փաստաբան Արտավազդ Փարսադանյանը հնչեցրել է Պալատի աշխատակիցների ներկայությամբ:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Արտավազդ Փարսադանյանին առաջարկվել է՝ Օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ներկայացնել բացատրություն Լիանա Մխիթարյանի դիմումի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից բացատրություն չի ներկայացվել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 15.08.2023 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, ինչպես նաև 30.08.2023թ. ներկայանալ Պալատ՝ գործի հանգամանքների քննարկման նպատակով: Նշվածի կապակցությամբ Դիմողը չի ներկայացրել որևէ դիրքորոշում, ինչպես նաև չի ներկայացել կազմակերպված քննարկմանը:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 21.07.2023թ. թիվ 179-Ա/ԿԳ-23026 որոշմամբ փաստաբան Արտավազդ Փարսադանյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.2.2 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

26.07.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 15.09.2023թ. կազմել է եզրակացություն:

– Եզրակացությամբ հաստատված է համարվել, որ Դիմողը և Փաստաբանը 06.04.2023թ. ներկայացել են Պալատ թիվ 23001 կարգապահական գործով Պալատի կարգապահական հանձնաժողովի նիստին մասնակցելու նպատակով:

– 16.08.2023թ. Աշխատակցի կողմից Դիմողին ուղարկվել է պահանջ գրություն, որտեղ նշել է, որ անհրաժեշտ է ապացուցել փաստաբան Արտավազդ Փարսադանյանի վարքագծում Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշների առկայությունը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 20.09.2023թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 02.11.2023թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

– Դիմողը և Փաստաբանը 06.04.2023թ. ներկայացել են Պալատ թիվ 23001 կարգապահական գործով Պալատի կարգապահական հանձնաժողովի նիստին մասնակցելու նպատակով: Նշված փաստը հաստատվում է Դիմողի բացատրությամբ, ինչպես նաև Պալատի կարգապահական հանձնաժողովի 06.04.2023թ. թիվ ԿԳ-23001-2-Ա որոշման մեջ կողմերի մասնակցության վերաբերյալ նշումով:

– 16.08.2023թ. Աշխատակցի կողմից Դիմողին ուղարկվել է պահանջ գրություն, որտեղ նշել է, որ անհրաժեշտ է ապացուցել փաստաբան Արտավազդ Փարսադանյանի վարքագծում Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշների առկայությունը: Նշված փաստը հաստատվում է փոստային անդորրագրով և Դիմողի ներկայացված բացատրությամբ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի

եզրակացությունը, հաստատված չի համարում հետևյալ փաստը.

– Չնայած Դիմողը պնդում է իր հասցեին Փաստաբանի կողմից ***«Քեզ կարգի հրավիրի այ ոչխար» և «Ես քո հետ հետո կխոսեմ այ խփնված, դու շուտով կանացի գաղութում ես գտնվելու, տես քո գլխին ինչ եմ դնելու»*** արտահայտությունների կատարման հանգամանքը, այնուամենայնիվ, նշվածի վերաբերյալ չի ներկայացրել որևէ ապացույց:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Արտավազդ Փարսադանյանը փաստաբան է հանդիսանում 15.11.1990թ. թվականից և 2019-2023թթ. ընկած ժամանակահատվածում փաստաբանը ունի 1 կարգապահական տույժ (06.04.2023թ. թիվ ԿԳ-23001-2-Ա Հանձնաժողովի որոշմամբ փաստաբանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության ձևով, տույժը մարված չէ):

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Արտավազդ Փարսադանյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ...* :

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ*

կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի ենթադրաբար կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Սույն գործով Դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց, որը կվկայեր Փաստաբանի կողմից վերոնշյալ վարքագծի կատարումը, հետևաբար Դիմողը պետք է կրի հավելյալ ապացույց չներկայացնելու բացասական հետևանքը, իսկ չփարատված կասկածները պետք

է որակվեն փաստաբանի օգտին: Հանձնաժողովն ընդգծում է նաև, որ հետազոտել ու գնահատել է այն նիստի ձայնագրությունը, որի ժամանակ, ըստ Դիմողի, Փաստաբանը վիրավորել է իրեն, մինչդեռ նիստի ձայնագրությունը չի պարունակում Փաստաբանի կողմից կատարված այն արտահայտությունները, որոնց մասին պնդում է Դիմողը:

Նման պայմաններում, Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում փաստացի բացակայում են Կանոնագրքի 2.2.2-րդ ենթակետի, ինչպես նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների խախտման հատկանիշները, քանի որ նշված կանոնները կիրառելի են միայն փաստաբանի կողմից վերը նշված վիրավորական արտահայտությունները կատարված լինելու դեպքում, մինչդեռ Դիմողը չի ապացուցել իր կողմից նշված փաստերը, իսկ Փաստաբանն իր հերթին հերքել է վերը նշված արտահայտությունները կատարած լինելու հանգամանքը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արտավազդ Անդրանիկի Փարսադանյանի (արտոնագիր՝ թիվ 226) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-23026 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23026-2-Ա
02 նոյեմբերի 2023թ.
ք. Երևան